

Աստուած պէտք է զթայ Եւր, վերջին տարիներս առանց այն էլ այնչափ պատուհասների և զրկուներների ենթակայ եղած ժողովուրդին, և մեր երկիրն ազատ պահէ սարսափելի աղէտից, Սակայն ասած է՝ յուսալ պէտք է առ Աստուած, բայց պարսպ չնստել:

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ:

Հսկայական երկրագունդ. — Փարիզի 1900 թուի աշխարհամանդիսի համար Լոնդոնի աշխարհագրական դիվիզիոնի անդամներից մէկը սկսել է շինել մի երկրագունդ, որ իսկականից 300,000 անգամ միայն փոքր պէտք է լինի, 23%, մետր (12 սաժէն) տրամագծով: Երկրագունդի շուրջը, երկու քնկունների մէջին տարածութեան վրայ, պէտք է շինուի տասն յարկանի տախտակամած, ուր կարող են քարտնայալ նտաքրքրի դիտողները, երկրի փոփոխական դրութիւնները տեսնելու համար:

Բախիլիդէս քանաստեղծի ներբողներ. — Եգիպտական մի դամբարանում զագաղի վրայ փաթաթուած գտել են մի պապիրոս, որի վրայ գրուած են հին յունական քանաստեղծ Բախիլիդէսի կորած ներբողները: — Բախիլիդէսը նմանող եւ ախոյան էր հռչակատը Պինդարոս քանաստեղծին եւ համարուում է Նսքիւէսի հօրեղբայրը: Այս կարգի գիտերի մէջ սա առաջինը է: Նոյն տեղում գտնուած է Արիստոտէլի «Աքննական սահմանադրութիւն» գրուածքը եւ ուրիշ յիշատակարաններ, որոնք տգէտների ձեռքին ծառայել են իրբեւ մուսիանների փաթաթում: Անգիլացիք, օգտուելով իրանց տիրապետութեամբ Եգիպտոսում, պեղումներ են անում հնագոյն աշխարհի անբակներում եւ հարստացնում են գիտերով Բրիտանական թանգարանը: Բախիլիդէսը, հսկայական անտիական աշխարհի առ ծակատագիրն ունեցած հաւատի, լաւատես քնարերգու էր, ինչպէս եւ իւր ժամանակակիցներից, շատերը:

Բուրդայի ծննդեան իսկական տեղը. — Հուսիս-արեւմտեան Հնդկաստանի հնագիտական աշխատանքների վերատեսուէր Փարքը մի նոր գիւտ է արել, որ կարծես նշանակութիւն ունի Հնդկաստանի եւ Բուրդայայականութեան պատմութեան համար: Պեղումներ անելով Մաուզա — Պաղեբիայից 15 մղոն հեռու դէպի հիւսիս — արեւելք, յիշեալ գիտնականը գտել է 10 ոտնաչափ քարձրութիւն ունեցող միակուտը քարից մի արձան, ամբողջապէս ծածկուած ուխտաւորների մակագրութիւններով, որոնցից մի քանիսը մեր թուականի իններորդ դարից են: Յայտնի է, որ Բուրդան ապրում էր նեպալում, բայց նրա ծննդեան իսկական տեղը ժողի որոշուած չէր: Նորագիտ արձանը, ինչպէս երեւում է նրա վրայի արձանագրութիւնից, կանգնել է Ազոկա թագաւորը Բուրդայի ծննդեան տեղում, 250 թ. Էրիստոսից առաջ: Արձանագրութեան վանքականութիւնը հաստատուած է ուրիշ պեղումներով, որոնց շնորհիւ շատ ուրիշ անբակներ են յայտնուել կրթողից 8 մղոն հեռու, որտեղ գտնուում էր հաւանօրէն Կապիլավաստան, Բուրդայի հօր՝ Սուրիտոյանա արքայի աթոռանիստը, որ ծաղկում էր Քր. ծննդ. 3 դար առաջ: Բեգարայի թագաւոր Ազոկա, որ իշխում էր ամբողջ Հնդկաստանի վրայ մինչեւ 225 թ. Էր. ծն. առաջ, շատ յիշատակարաններ է նուիրել իւր կրօնի հիմնադրին, եւ իսկապէս Հնդկական հնագիտութիւնը սկսում է նրա թագաւորութեան օրերից:

Ռեօնտգէնի ժառագայթների քննիչ օտարական ներգործութիւնը. — Հռչակատը Լոնդոնը յայտնել է ի շուրջ աշխարհի, թէ Ռեօնտգէնի ժառագայթների շնորհիւ բոլոր կայրերը հարաւորութիւն կունենան տեսնելու միայն թէ տեսողութեան նեարդը վնասուած չլինի: Փրանսիական Revue des Revues հանդէսը յայտնելով այդ նորութիւնը, իւր կողմից նկատում է, թէ Լոնդոնը չի քաջատրուում այդ երկույթի պատճառները: Փորձերը ցոյց են տալիս, որ կայրերը կարողանում են տեսնել միայն Ռեօնտգէնի ժառագայթները, բայց այն կայրերը, որոնք որեւէ պատճառով զրկուած են աչքի սսպից, որովհետեւ աչքի այդ մասը իւր մէջ է ամփոփում անյայտ ժառագայթները եւ չի թոյլ տալիս նրանց ցանցամաշիկ վրայ տպաւորուելու: Մնախօս Իոկտոր Բրանդ փորձեր է արել մի դեռստաս աղէտկայ վրայ, որի ծախ աչքը զրկուած է եղել ոսպից. այդ աչքով աղէտիկ նկատել է այն առարկաները, որոնց վրայ յից անդրադառնում էին Ռեօնտգէնի ժառագայթները, մինչդեռ աչ աչքով միանգամայն ոչինչ չէր նկատում:

Նոյն ժառագայթները ուրիշ ազդեցութիւն եւ ունին: Գերմանացի պրոֆեսոր Փուկս մի ժամուայ ընթացքում իւր ձեռքը ենթարկելով այդ ժառագայթների ներգործութեանը, յանկարծ յօդերի մէջ ծակոցի նման մի ցաւ է զգացել, որը գնալով այնքան է սաստկացել, որ նա ստիպուած է եղել փորձը դադարեցնել: Ձեռքի կաշին ուռել է կապտուել, խոշորացոյցով կաշու վրայ նկատուել են փոքրիկ պատառուածքներ, ինչպէս լինում են մարմնի մերսած տեղերում. փոքր ժամանակից յետոյ կաշու վրայ ընտիկներ են գոյացել, որոնք լցուել են թարախով, ինչպէս լինում են այրուած քից առաջ եկած բշտիկները:

Անգլիական Nature հանդիսի աշխատակիցներից մէկը մի քանի ամիս շարունակ պարսպել է Ռեօնտգէնի ժառագայթների միջոցով առարկաներ լուսանկարելով: այդպիսով նա օրական մի քանի ժամ իւր մարմնի որոշ մասերը ենթարկում էր այդ ժառագայթների ազդեցութեանը: Մի անգամ նա նկատել է իւր մատների կաշու վրայ քաղմութիւ սեւազոյն բշտիկներ, յետոյ կամաց կամաց կաշին սկսել է այրուել: Ցաւը դադարեցնելու համար նա ձեռքը դրել է խիտ սառն ջրի մէջ, եւ երբ այդ միջոցը չէ օգնել, դիմել է բժշկի խորհրդին: սա քսելու դեղ է տուել. ցաւը թէեւ փոքր ինչ դադարել է, բայց կաշին սկսել է պոկուել, եւ տեղը նորն է եկել: Մատերի ծայրերն ուռել են, եղուզների տակից դեղնազոյն հեղուկ է ձորուել. երեք անգամ աչ ձեռքի կաշին է պոկուել, մի անգամ ծախիկը, աչ ձեռքի շոքս եղունգը ընկել են, ծախի երկուսը. ամբողջ 6 շաբաթ չէ կարողացել աչ ձեռքը գործ դնել: Բժիշկները խոստովանել են իրանց անգործութիւնը այս տարօրինակ երկույթի առաջ աննելու:

Յեսուէ Սիբաքի Դմաստութեան քննագիրը. — Անցեալ ձմեռ Ետոլանդացի երկու քոյրեր, Gibson և Lewis, այցելում են Ս. երկիրը, որտեղ նոքա գնում են մի քանի երրոյսական հին ձեռագիրներ շիմանալով նոքա քովանդակութիւնը: Անգլիացում այդ ձեռագիրները տալիս են Կեմբրիջի համալսարանի Schester պրոֆեսորին աչքի անցնելու: Այդ պրոֆեսորի անելով ձեռագիրներից մէկը քովանդակում է Յեսուէ Սիբաքի Դմաստութիւնից 50 տուն (ԼԹ. 15 — 10, 6) սկզբնական երրոյսական լեզուով, որով զօրուած է եղել այդ գիրքը: Ժամանակի ընթացքում քնագիրը կորչում է եւ պահուում է միայն յունական թարգմանութիւնը: Թէպէտեւ 50 համարը զօրի մի փոքրիկ մասն է կազմում, բայց ս. Գրքի քննադրով զարագներից մէկը քովանդակում քնագրի այս փոքրիկ կտորն է մեծ հետաքրքրութիւն եւ արժէք կարող է ունենալ: